ձին նշանակութիւն չունի (*)։ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը(**) գրել է նա Վայոց ձորի Թանատեաց վանքի շինութեան և նաւակատեաց տօնի առթիւ, որին ներկայ է եղել ինքը, որպէս Պռոշեանց տան եպիսկոպոս, նաև յատուկ շարական գրել, որ դեռ յայտնուած չէ։ Վանքի արձանագրութիւնների և Օրբէլեանի վկայութեան համաձայն շինութիւնը պիտի նշանակել ՁԻԲ – ՁԻԲ թուերին. նաւակատեաց տօնն, ուրեմն, վերջին թուականին, երբ գրուած է վկայաբանութիւնը և ընծայուած հեղինակի կողմից «վանաց սրբաժողով եղբայրուե.»։ Մենք այն կարծիքն ունինք, թէ նոյնիսկ վանքի շինութեան արձանագրութեան հեղինակը Մխիթարն է (***)։ Վկայաբանութեան որոշ մասերն ունին Օրբէլեան, Գանձակեցին և Կաղանկատուացին. Օրբէլեանը իւր ամբողջ նիւթը բառացի կամ ըստ իմաստի քաղել է Մխիթարից, իսկ սա թէև ծանօթ վերջին երկուսին էլ, և նոյնիսկ հետևած Կաղանկատուացուն Սիւնեցու ժամանակը բնորոշելիս, բայց վկայաբանութեան աղբիւրը Կաղանկատուացին չէ, առաւել ևս Գանձակեցին, այլ մի աւելի հին «սկզբնական» աղբիւր, որից օգտուել են Կաղանկատուացին եւ Մխիթար։ Յայտմաւուրքների մէջ բացի այս «սկզբնական» աղբիւրից, եղել է նոյն վկայաբանութեան մի ուրիշ խմբագրութիւն, որի մէջ Սիւնեցու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կապւում է Բարգէն կաթուղիկոսի հետ, որ Մխիթարն իրաւամբ սխալ է համարում. այդ խմբագրութիւնը կատարուած է Շնորհալուց յետոյ(****)։ Այս խմբագրութեան մէջ չկայ Սիւնեցու և Սմբատ Բագրատունու վիճաբանութիւնը և դորան կից կայսեր հետ խօսակցութիւնը, բայց նկատելի է նորա հետքերը Մխիթարի կազմած վկայաբանութեան մէջ։ Իւր հերթին Մխիթարի այս վկայաբանութիւնը ոչ միայն աղբիւր է եղել Օրբէլեանի համար Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը գրելիս (Գլ. ԼԲ), այլ և այստեղից է առել իւր ծանօթութիւնները նախարարական և եպիսկոպոսական բարձերի և աթոռների դասաւորութեան նկատմամբ և ոչ անմիջական աղբիւրներից, թէև յիշում է նրանց անունը։

Պատմական – ժամանակագրական տեղեկութիւնների համար Մխիթարն օգտւում է մեր պատմագիրներից. Կաղանկատուացու մասին խօսք եղաւ արդէն. նորա հետեւողութեամբ է բնորոշում Սիւնեցու հանդէս գալու ժամանակը, ինչպէս և հայ նախարարների ութհարիւրով եւ չորս հարիւրով Նախիջեւանում եւ Խրամում այրելը(*). Սամուէլ Անեցուց է առել Դուինի նուաճումը արաբների կողմից և երեսուն ու հինգ հազարի գերեվարութիւնը (**), Դուինի աւերումն ու վերստին շինութիւնը համապատասխան է Ղեւոնդին (***), Դուինի առումն ու վրէժխնդրութիւնը Դէորգի Գ.ի կողմից առել է Վարդանից (****)։ Բացի սոքանից օգտուել է և այնպիսի աղբիւրներից, որոնք կորած են տարաբաղդաբար. հայ նախարարների բարձերի կամ գահնամակի տեղեկութիւնն առել է մասամբ Ագաթանգեղոսից և Մեսրոպ երէցից, բայց առաւելապէս Ղեւոնդից, որ այդ մասով կորած է (*****). Եպիսկոպոսական աթոռների դասաւորութիւնը Սամուէլ Կամրջաձորեցուց, որ նոյնպէս կորած է (******). Ծագ ազգի մասին առել է Ուխտանեսից, որ Ա. գլխի մէջ խոստանում է գրել (*******), այժմ կորած այդ մասով, բայց ամբողջութեամբ կար Մխիթարի ձեռքին. վերջապէս Թոնդրակեցւոց ծագման ժամանակի մասին տալիս է տարբեր տեղեկութիւն, քան մենք գիտենք Ասողիկից և Գրիգոր մագիստրոսից (********). այս էլ, գուցէ, քաղած լինի Ուխտանեսից։

Աղբիւրների այսպիսի ցուցումներով ինքնին կատարած կը լինենք և Մխիթարի այս երկի գնահատականը, եթէ աւելացնենք նաև, որ իբրև ժամանակակից և ականատես, տեղեկութիւն է տալիս Պռոշ իշխանի Գեղարդի վիմափորների ծագման և Թանատեաց վանքի նաւակատեաց տօնի մասին։ Բայց ունի և թերութիւններ ու սխալներ, որ մատնանշել ենք մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ (եր. 14)։

Մխիթարի Գանձերի և հեղինակի ձեռքով 1286 թուին ժողովածու կազմելու և ապա Գրիգոր Խլաթեցու տուած տեղեկութեան մասին 1386 թուին, երբ նա այդ նպատակով Այրիվանք էր եկել, պատմել ենք

(*) Ձեռ. Լ.Ջմ. № 145։ Ներքևի լուսանցքում. «Մխիթար վրդ. Այրիվանեցին է գրել զպատմութիւնս զայս. եւ զիս յիշեա վս. Այ. աղաչեմ»։

(**) Հրատարակուած մեր «Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր» աշխատութեան մէջ, 17-23։

(***) Անդ. եր. 9։

(****) Անդ. եր. 9-13 Մխիթարի և միւս երեք պատմագիրների գրական առնչութեան մասին։ Վկայաբանութեան այս տարբեր խմբագրութեան մասին՝ եր. 20։

(*) Կաղանկ. Շահնազ. հրատ. Փարիզ, 1860, եր. 44 և 46-47 համեմատել Վկայաբանութեան, եր. 17, երկրորդ պարբերութիւնը և երրորդի առաջին տողերը։

(**) Սամուէլ Անեցի, Լ.Ջմ. հրատ. Տէր Միքելեանի ձեռքով, եր. 80 վերջին պարբերութիւնը համեմ. Վկայաբանութեան եր. 19, Դուինի աւերման տեղեկութեան հետ։

(***) Ղեւոնդ, Եղեանցի հրատ. Ս. Պետերբուրգ, եր. 36, Դուինի աւերումն ու վերաշինութիւնը Աբզլ-Ագիվի ձեռքով համեմ. Վկայաբ. եր. 19, երկրորդ պարբերութեան հետ։

(****) Վարդան, Լմինի հրատ., եր. 161, 162, համեմ. Վկայաբանութեան եր. 19։

(*****) Տես և Ալիշան, Այր. եր. 423։

(******) Կամրջաձորեցու այս երկի մասին յիշում է և Օրբէլեան, եր. 24/25, բայց Մխիթարի աղդեցութեան տակ։

(*******) Ուխտանէս, Լ.Ջմ.ի հրատ. եր. 14։ Ծագերի մասին տես Ազոնցի յօդուածը. Հանդ. Ամս. 1912, եր. 258։

(********) Ասողիկ, Շահնազ. հրատ. եր. 147։ Կ. Կոստանեան. Գրիգոր Մագիստրոս եր. 153։